

## ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայերենում բառեր կան, որոնք փոխառություններ են համարվում մի շարք վերապահումներով ու անբացատրելի հանգամանքներով հանդերձ: Սակայն ամեն ինչ հարթվում ու բացատրելի է դառնում, երբ վերանայվում է ստուգաբանությունը, և բառը բխեցվում է հ.-ե. նախաձևից: Այդպիսի բառերից է *մերսել*-ը:

Սա ներկայումս գրական հայերենում ընդունված է «1. մարմինը շփել, տրորել, մասաժ անել բուժական, մարզական կամ գեղահարդարման նպատակով, 2. շոյել, փայփայել, փաղաքշել» իմաստներով: Սակայն ստուգաբանական բառարաններում նա՝ որպես գլխաբառ, բացակայում է: «Արմատական բառարանում» այն նշված է որպես *մարձել* «շփել, օժել, մարմինը յուղով տրորել» բառի բարբառային տարբերակ: Տարբերակների շարքում նշված են նաև *մաժել, մերժել, մեժժել, մորձել, մորսել, մոսրել* ձևերը: Այս բոլորի, ինչպես նաև *մարզել* «վարժել, կովի կրթել, մարմինը ճկուն և ուժեղ դարձնել» բառի սկզբնաղբյուր է համարվում իրանական *marz* «սրբել, մաքրել, օժել» արմատը (ՀԱԲ, 3, 282), որի հ.-ե. նախաձևն է \*merg- «տերևները ևն քերել, հանել, սրբել, մաքրել» (ՀԱԲ, 3, 285)<sup>1</sup>: Միաժամանակ Հ. Աճառյանը նկատում է. «Տարօրինակ է այս բոլորի մեջ **ե, ռ** ձայնավորը, որ չկա իրանյանում. իսկ **ժ** ենթադրում է իրանյան երկրորդական \*marž ձևը» (ՀԱԲ, նույն տեղում): Նաև նշում է, որ հայերենը հ.-ե. նշված նախաձևից չէր կարող առաջանալ, այլապես պիտի լիներ *մերժ, մորժ* կամ *մարժ* ձևով (ՀԱԲ, նույն տեղում):

Այստեղ անտեսված է այն հանգամանքը, որ հ.-ե. \*merg'- նախաձևի առնվազն վերջնահնչյունը աճական է, որը կարող է հերթագայվել այլ բաղաձայններով՝ առաջ բերելով արմատային տարբերակներ: Անշուշտ, պետք է նկատի ունենալ նաև ձայնդարձային տարբերակները: Ի դեպ, այդպիսի տարբերակային նախաձևերից կամ բուն արմատից (\*mer-, \*mor-, \*mr- «տրորել, շփել») առաջացած է համարում Գ. Ջահուկյանը *մաշել* (*\*մարշել*) (\*mr-s- p-ի անկումով) (ՀՄԲ, 509-510, տե՛ս նաև ՀԱԲ, 3, 258), *մարմա(ն)ջ* «քոր, զրզիռ, տենչ, մոլուցք» (\*mr-) (ՀՄԲ, 517), *մարմառ* «մոլաքոր» (\*mr- կրկնությանը) (ՀՄԲ, 517-518), *մարսել* (\*mr-k-)

<sup>1</sup> Սրանցից տարբեր է *մարզ* «շրջան, գավառ» համանուն արմատը, որը համարվում է փոխառություն պահլավ. marz «ծայրագավառ» (հնխլ. \*merg'-, \*mereg- «սահման, եզր») բառից (ՀԱԲ, 3, 281-282, Պոկ., № 1299):

(ՀՄԲ, 518)<sup>2</sup>, *մառ* (*մեռ*) «ցլեպ, փուշ» (\*mɾ-s-) (ՀՄԲ, 510, ՀԱԲ, 3, 258, *մաշ* բառահոդվածում), *մառել* «կալսել» (\*mɾ-s-) (ՀԼՊ ԵԺ, 139), *մշել* (*մշրել*) «մանրել, փշրել» (\*mōr-s-) (ՀՄԲ, 531), *մոր(մ)* (*մուր*) «փաղեժ» (\*mor-, \*mōr-) (ՀՄԲ, 535), *մորձ* (*մորչ*, *մորջ*) «դալար փոքր ձյուղ» (\*mor-g-io-, \*mor-k-io-) (ՀՄԲ, 535), *մորսել* «կրծել» (\*mor-d-) (ՀԼՊ ԵԺ, 139), *մորմոր* (\*mor- կրկնությամբ), *մրմուռ* ((\*mōr-s- կրկնությամբ) (ՀՄԲ, 536), *մուրձ* (*մուրջ*) «կռան» (\*mōr-g-io- կամ \*mōr-d-io-) (ՀՄԲ, 540), *մուրց* «բռունցք», *մրցիլ* «մրցել» (\*mōr-d-sk-) (ՀՄԲ, 541), *մարս(նչել)* «կռիվ» (\*mɾ-d-)<sup>3</sup> (ՀՄԲ, 518, ՀԱԲ, 3, 289) բառերը<sup>4</sup>:

Ուրեմն նույն բուն արմատի՝ աճականով տարբերակներից էլ պետք է բխեցնել թե՛ *մարձ*-ը և դրա տարբերակները, թե՛ *մարզ*-ը. \*mər-gʰ- > *մարձել*, \*mor-gʰ- > *մորձել*<sup>5</sup>, \*mer-k- > *մերսել*, \*mor-k- > *մորսել*, *մուրել* (դրափոխությամբ), \*mə(r)-gʷh- > *մաժել*, \*mer-gʷh- > *մերժել*, *մեժժել* (առնմանությամբ)<sup>6</sup>, \*mɾ-gʰ- > *մարզել*<sup>7</sup>:

Պետք է նկատել, որ հայերեն *մարզել*, *մարձել* բառերն ու դրանց տարբերակները իրանական *marz* «սրբել, մաքրել, օծել» արմատին հիմնականում չեն համապատասխանում ոչ միայն ձևով, այլև իմաստով: Այսպես, իրանյան *marz*-ը չունի «մարզել, վարժել, կովի պատրաստել» իմաստը, որը Հ. Աճառյանը ենթադրաբար վերականգնել է տիպաբանական զուգահեռների միջոցով՝ հուն. *ἀλείφω* «1. յուղով օծել, 2. կովի պատրաստել» (ՀՄԲ, 3, 282): Իրանյան ձևը չունի նաև «տրորել, շփել, շոյել, մերսել» իմաստները, որոնք բնորոշ չեն նաև իրանյան նույնարմատ այլ բառերի (*marəz* «սրբել, մաքրել, ավլել», *marzitan* «զուգավորվել»), որ հիշատակել է Հ. Աճառյանը (ՀՄԲ, 3, 285):

Յ. Պոկոռնու բառարանում հիշյալ բուն արմատը ներկայացված է որպես \*mer-5, \*merə- «քսել, տրորել, շփել, սրբել, մաքրել, փաթեթել, լցնել, սեղմել, ճնշել, հափշտակել, իլել, մաքրագարդել» (Պոկ., № 1296, նաև ՀԼՊ ԵԺ, 138-139): Այդ արմատի տարբերակներից և հետագա զարգացումներից բերենք *մերսել* և *մարզել* բառերի՝ վերը առաջարկված ստուգաբանությունները հաստատող մի քանի օրինակ՝ վերցված Յ. Պոկոռնու բառարանից. մ.ս.գերմ. *morken* «տրորել, ճմլել», հ.հնդկ. *mārdati*, *mārdāyati* «տրորված, ճիլված, ճմրթված», լատվ. *mer-d-* «շփել»,

<sup>2</sup> Հ. Աճառյանը *մարսել* բառը համարել է փոխառություն աստր. *məras* «ճզմել, ճմլել»-ից (ՀՄԲ, 3, 288):

<sup>3</sup> Գ. Ջահուկյանը *մուրց*-ի տակ որպես նույնարմատ ձև նշում է նաև *մարս(նչել)*-ը (ՀՄԲ, 541), որը իր բառահոդվածում, սակայն, բխեցվում է \*mɾd-՝ \*merā- «ջարդել, փշրել» նախաձևից (ՀՄԲ, 518):

<sup>4</sup> Նկատենք, որ *մարզել*, *մերսել* բառերին իմաստով, գործառությամբ ու ձևով ամենից մոտ են *մարսել*, *մրցել* բառերը:

<sup>5</sup> *Մարձել*, *մորձել* ձևերի *ձ*-ի համար հմմտ. *դարձ* < \*dhər-gʰ- (ՀՄԲ, 189), *բարձ* < \*bhər-gʰ- (ՀՄԲ, 121), *որձ* < \*or-gʰi- (ՀՄԲ, 607):

<sup>6</sup> *Մաժել* և այլ ձևերի *ժ*-ի համար հմմտ. *շարժել* < \*skər-gʷh- (ՀՄԲ, 583), *իժ* < \*ēgʷhi- (ՀՄԲ, 284):

<sup>7</sup> Չայնավորից հետո \*gʰ>ձ անցման մասին տե՛ս Լ.ՔՀԼ, էջ 539-540:

մ.բ.գերմ. zermürsen «ճզմել, փշրել, շաղախել, տրորել, մերսել» (№ 1296), հ.հնդկ. mārṣti, mārjati, mṛjati «շփել, տրորել» (№ 1267), հուն. σμῆν (կատ. σμῆσαι), σμῆται, σμᾶται, «մաքրել, սրբել, տրորել, շփել, մերսել, քսել, օծել», σμάω (σμῆσθαι)<sup>8</sup> «մերսել», նորվ. smeikja «փաղաքշել», հ.բ.գերմ. bair. schmaudeln «շոյել, շողոքորթել» (№ 1785), լատ. mulceō, -ēre, mulsi, -sum «հպվել, մերսել, քսել, շոյել, փայփայել, հանգստացնել, հաճույք պատճառել»<sup>9</sup> (№ 1270), հուն. μάχομαι «կռվել, մենամարտել, մրցել» (№ 1209):

3. Պոկոռնու բառարանում կա նաև \*smē- (\*smeī-, \*sm-ei-) «քսել, շփել, տրորել, քերել» պարզական արմատը (№ 1785), որի \*s- սկզբնահնչյունը անկայուն է (սահող \*s-) և ժառանգ ձևերում շատ հաճախ ընկնում է: Այդ նույն բառահողվածում առանձնացված են այս պարզական արմատի աճականով ընդլայնումները՝ \*smeid-/\*smidjō- (որից է **միծ** «ցելի, տիղմ, կեղտ, մթին» բառը), \*smē[i]k-/\*smik-, \*smē[i]g-/\*smīg-, \*(s)mēu-/\*(s)məu-/\*(s)mu-:

Նշված պարզական արմատին ու նրա զարգացումներին թե՛ ձևով, թե՛ իմաստով շատ մոտ են առանձին գլխաբառերով ներկայացված թե՛ վերոհիշյալ \*mer-5, \*merə- «շփել, տրորել» արմատը (№ 1296)<sup>10</sup>, թե՛ \*maġ- «սեղմել, մամլել, հունցել, շաղախել» (№ 1208)<sup>11</sup>, \*maġh- «կռվել, մարտնչել, պայքարել» (№ 1209), \*mai-2 (\*moi-?) «քսել, կեղտոտել, անմաքուր» (№ 1211), \*māk-2 «հունցել, շաղախել, տրորել, սեղմել, մամլել» (№ 1214)<sup>12</sup>, \*mei-k- (և \*mei-g-?) «հարել, խառնել» (№ 1251), melk-1 «շփել, տրորել, քերել» (№ 1270), men-2 «տրորել, ճնշել, սեղմել, քայլել» (№ 1278), men(ə)k- «հունցել, շաղախել» (№ 1286), menth-1, meth- «հարել, խառնել» (№ 1290), (mer-3), mor-(u)- «սևացնել, մուգ բիծ» (№ 1294) (որից՝ **մռայլ, մառ**-ախուղ), mer-6, mer-s- «անհանգստություն, զայրույթ» (№ 1297) (որից՝ **մռռանայլ**), merg-1 «պլոկել, մաքրել, ջնջել» (№ 1301) (որից՝ **մերժել**), merk-2, mork- «մռայլ» (№ 1306), meu-2, meuə- «շարժել, հեռացնել» (№ 1310)<sup>13</sup>, meug-2, meuk- «սահել, շարժվել» (№ 1313) (որից՝ **մուխ, մխրճել**)<sup>14</sup> և այլ արմատներ: Ձևաիմաստային ընդհանրությունները նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ սրանք բոլորը \*smē- (\*smeī-, \*sm-ei-) «քսել, շփել, տրորել, քերել, շաղախել,

<sup>8</sup> Տե՛ս <http://gurin.tomsnet.ru/alphaonline.html> (Alpha online. Древнегреческо-русский словарь):

<sup>9</sup> Տե՛ս նաև <http://radugaslov.ru/latin1.htm> (Большой латинско-русский словарь):

<sup>10</sup> Փակագծերում նշված են 3. Պոկոռնու բառարանի առցանց տարբերակի բառահողվածների հերթական համարները (Պոկ.):

<sup>11</sup> Այս արմատից է բխեցվում **մած**- «կպչել, շաղախ, մակարդ» արմատը (ՀՄԲ, 3, 228-230, ՀՄԲ, 501):


<sup>12</sup> Գ. Ջահուկյանը այս արմատից է բխեցրել **մացառ** բառը (ՀՄԲ, 519):

<sup>13</sup> Գ. Ջահուկյանը այս արմատից է բխեցրել **մուղ** «հրել, դրդել, տանել» բառը (ՀՄԲ, 537-538):

<sup>14</sup> Գ. Ջահուկյանը սրանց է միացրել նաև **մկրտել** և **մխկիլ** «լսվել, հոտել» բառերը (ՀՄԲ, 529-530):

մանր, նուրբ, թեթև» պարզական արմատի ծավալումներն են տարբեր աճականներով և ձայնդարձի տարբեր աստիճաններով: Հետագոտողները փորձում են տարանջատել սրանք՝ որպես առանձին արմատներ, սակայն իմաստային խաչաձևումները խոչընդոտում են և բացահայտում դրանց ծագումնաբանական կապը, ուստի նրանք հաճախ փոխադարձ հղումներ են տալիս այդ արմատների միջև:

Հ.-ե. \*smē- (\*smeī-, \*sm-ei-) արմատը դուստր լեզուներում լայնորեն ճյուղավորվել է ոչ միայն ձևային, այլև իմաստային զարգացումներով: Ահա իմաստային զարգացման մի համառոտ ուրվագիծ՝ ըստ Յ. Պոկոռնու ներկայացրած նյութերի (տե՛ս գծանկարը):



Իմաստային անցումները, եթե կատարվել են հանրույթային բանաձևերով, ապա կարող են վերաբերել ոչ միայն նախալեզվի մակարդակին, այլև նախալեզվի տրոհումից հետո ցանկացած ժառանգ լեզվի զարգացման ցանկացած մակարդակի: Ապացուցողական արժեք ունեն ոչ միայն արմատային տվյալ տարբերակի սահմաններում, այլև պարզական արմատի ու նրա զարգացումների (ճյուղավորումների) ամբողջության սահմաններում կատարված իմաստային անցումները՝ անկախ արմատային տարբերակումներից: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ զարգացումների (անցումների) ոչ բոլոր օղակներն են պահպանված, առավել ևս վկայված ու գրանցված: Վկայվածներից էլ ոչ բոլորն են մատչելի ու հայտնի լինում հետազոտողներին: Հետևաբար հարկ է լինում բավարարվելու ձեռքի տակ եղած դրվագներով: Սույն կարգի հետազոտությունները առիթ են՝ հայտնաբերելու և շրջանառության մեջ դնելու մի շարք անտեսված վկայություններ այս կամ այն լեզվից և նպաստելու զարգացումների անհայտ օղակները լրացնելուն: Սա նաև առիթ է նոր ստուգաբանություններ ու վերաստուգաբանություններ առաջարկելու համար:

Հայերենում կան մի շարք չստուգաբանված կամ փոխառյալ համարվող բառեր, որոնք կարելի է բխեցնել հ.-ե. վերոհիշյալ \*smē- (\*smeī-, \*sm-ei-) «շփել, տրորել» արմատից ու դրա ածանցյալներից: Ահա դրանցից մի քանիսը՝ Յ. Պոկոռնու և այլ բառարաններից բերված գուգահեռներով:

**Մաշտել** (մաշ+տ-) «1. խել, քայքայել, թափել, 2. քերել, քերթել, 3. քերելով մորթը մաքրել, թիմարել, 4. մազերը խուզել, ճադատացնել» [ $<^*(s)m\theta(r)-s$ ]<sup>15</sup> «տրորել, շփել» **ր**-ի անկումով և **տ** սաստկական ածանցով]<sup>16</sup>: Այս բառը Գ. Ջահուկյանը իրավացիորեն, բայց կասկածով փորձել է կապել **մաշել** (**\*մարշել**) բառի հետ (ՀՄԲ, 510): Վերոհիշյալ նկատառումները հաշվի առնելով՝ նրա կասկածը կարելի է համարել փարատված:

**Մշտել** (մշթել, մշտոկել) (մշ+տ-) «1. թեթև հրել՝ բոթել, խթելով դրդել, ձեռքը՝ արմունկը ևն թեթևակի դիպցնել մեկին՝ մի բան գլխի զցելու համար, 2. կուրծք ուտելիս դնչով ստինքին խփել, 3. ստինքի կաթը ծծել» [ $<^*(s)m\theta(r)-s$  «տրորել, շփել»՝ **ր**-ի անկումով և **տ** սաստկական ածանցով]<sup>17</sup>: Ստուգաբանական բառարաններում այս բառը բացակայում է: Ս. Մալխասյանը փոխառյալ է համարել պահլավերեն **mušt** «բռունցք» բառից (Մալխ., 3, 349): Սակայն **մշտել** բառի իմաստը բռունցքի հետ չի կապվում: «Բռնցքահարել, բռնցքել» իմաստով հայերենում սովորաբար գործածվում է **մուշտի տալ** հարադրությունը, բայց ո՛չ **մշտել**-ը: Մրանց ծագումնաբանական տարբերության օգտին է խոսում նաև **ու** ձայնավորի՝ մի դեպքում հնչյունափոխվելը, մյուս դեպքում՝ ոչ:

**Մշտիկ** (մշ+տ+իկ) «1. ցախավելի նման փոքր փնջիկ՝ տրցակ՝ թեթև ցնցումով հեղուկ ցողելու համար, 2. սպունգ» [ $<^*(s)m\theta(r)-s$  «տրորել, շփել» (**ր**-ի անկումով)]<sup>18</sup>: Հավանաբար ածանցյալ է նախորդ բառից: Հ. Աճառյանը այս բառը փոխառյալ է համարել պահլավերեն ենթադրյալ **\*muštik** բառից, իսկ իրանական իրական (ոչ ենթադրյալ) զուգահեռները (mušt «ափ, բուռ, բռունցք» և այլն) իմաստով հեռու են, ուստի դրանց կապը հայերեն բառի հետ հիմնավորելու համար Հ. Աճառյանը դիմել է իմաստային անցման տիպաբանական զուգահեռների՝ լատ. manipulus «1. մի բուռ, 2. տրցակ», պարսկ. dast «1. ձեռք, 2. տրցակ» (ՀՄԲ, 3, 336): Ավելի համոզիչ է հ.-ե. նախաձևի հետ ուղղակի կապ տեսնելը:

**Մշակել** (մշ+ակ-) «1. վարել-ցանել, 2. աշխատել, խնամք տանել, բարելավել, 3. կազմել» [ $<^*(s)m\theta(r)-s$  «տրորել, շփել»  $<^*(s)me-$  «աղալ,

<sup>15</sup> Հնիլ. **\*rs** > **p2** համապատասխանության համար հմնտ. **խարշ** < \*khars-, **խարշ** < \*khors-, **գարշ** < \*ghars-, **թարշամ** < \*tars- և այլն (տե՛ս ՀՄԲ, ՀՄԲ, համապատասխան բառահոդվածները):

<sup>16</sup> Հմնտ. հ.հնդկ. mr̥śati «քսել, տրորել, քերոց, թիմարիչ» (№ 1267), հ.հնդկ. mr̥-ṇa-j-āni, mr̥jāta «քերել, մաշկել», հուն. ἀμέργω «պլոկել» (№ 1301), հ.իլ. mā (\*mawēn) «մաշել, քերծել» (№ 1785):

<sup>17</sup> Հմնտ. շվեյց. schmauchen «հպվել» (№ 1313), ավեստ. zastā-maršta- «ձեռքսեղմում» (№ 1267), հ.հնդկ. mīvati «հրել, շարժել», mūrā- «շտապեցնել», հուն. ἀμῶνω «կասեցնել, վանել» (№ 1310):

<sup>18</sup> Հմնտ. հ.հնդկ. mr̥śayati, mraksayati «թափ տալ, սրբել, ավլել» (№ 1267), լատ. merges, -itis «խուրձ» (№ 1301), նաև՝ լիտվ. mentūris, -ūrė, լատվ. mieturis «ցախավել» (№ 1290), ռուս. метла «(ցախ)ավել» (Цыг., мести):

շաղախել, մանր, նուրբ» (ը-ի անկումով):<sup>19</sup> Հ. Աճառյանը համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (<վրաց. *muša*, *mušaki* «աշխատավոր») (ՀԱԲ, 3, 335): Նա պարսկ. *mušāq* բառը նույնպես համարել է փոխառյալ (նույն տեղում): Գ. Ջահուկյանը թե՛ հայերեն, թե՛ կովկասյան բառերը համարել է փոխառություն իրանական ենթադրյալ \**mišak(a)*, \**mixsa-ka* ձևերից (ՀՄԲ, 531): Այս կարծիքների հակասությունը և խոցելիությունն են մեզ հիմք տվել առաջարկելու բնիկ հայկական ծագման վարկածը՝ ենթադրելով, որ հայկական և իրանական ձևերը հ.-ե. ինքնուրույն զարգացումներ են: Կովկասյան ձևերի հետ նմանությունը կարելի է բացատրել հակառակ փոխառությամբ կամ թերևս նստրատիկ ընդհանրությամբ:

**Մարմանդ** (մարմ+անդ) «հանդարտ, մեղմ, թեթև, բարեխառն», **մարմաշ** (մարմ+աշ) «նուրբ, բարակ (գործվածք ևն)», **մարմաղ** (մարմ+աղ) «զաղջ, գոլ», **մրափ** (**մուրափ**) (մր+ափ) «թեթև քուն, նիբհ, նիինջ» [<\*(s)mər-m-, (s)mōr- <\*(s)mer- «տրորել, շփել» <\*(s)me- «շաղախել, մանր, նուրբ, թեթև»]<sup>20</sup>: Մրանցից առաջինը (*մարմանդ*) Հ. Աճառյանն ու Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 286, ՀՄԲ, 517): Երկրորդը (*մարմաշ*) Հ. Աճառյանը համարել է փոխառություն վրացերենից (ՀԱԲ, 3, 286), իսկ Գ. Ջահուկյանը ենթադրել է, որ հայերեն ու վրացերեն համանուն ձևերը փոխառություն են ինչ-որ մի արևելյան լեզվից (ՀՄԲ, 517): Երրորդ բառը (*մարմաղ*) (ՀԼԲԲ, 4, 38) ստուգաբանական բառարաններում բացակայում է: Չորրորդ բառը (*մրափ*) համարված է անհայտ ծագման (ՀԱԲ, 3, 369, ՀՄԲ, 542) (*մուրափ* տարբերակի համար տե՛ս ՀԼԲԲ, 4, 87): Այս բառերի **-անդ**, **-աշ**, **-աղ**, **-ափ** վերջածանցների համար հմմտ. *հիվանդ*, *եռանդ*, *արզանդ*, *վարսանդ*, *կալանդ*, *թթվաշ*, *մատղաշ*, *խարտյաշ*, *խաղաղ*, *հապաղ*, *հոտաղ*, *կենցաղ*, *կախաղան*, *փակաղակ*<sup>21</sup>, *սոսափ*, *սարսափ*, *թարթափ*, *թոթափ*, *խուսափ* և այլն:

**Մշուր** (մշ+ուր) «մանրուք, փշուր», **մշոշ** (մշ+ոշ) «մանր կտրտած բանջարեղենով ճաշատեսակ», **մշիրած** (մշ+իր+ած) «ռուպի ու

<sup>19</sup> Հմմտ. նաև՝ հ.սաքս. (gi)-*makōn* «անել, կառուցել, շինել», հ.բ.գերմ. *mahhōn* «անել, կառուցել, շինել», հ.բ.գերմ. *machen*, անգլ.-սաքս. *macian* «անել, պատճառել» (№ 1208), լատ. *mācerō* «փափկացնել», *macer* «բարակ, նուրբ», հուն. *μάσσω* «տրորել, խառնել, հարթեցնել», շոտլ. *mak*, արլ.ֆրիզ. *moakje*, արմ.ֆրիզ. *meitsje*, հոլ. *maken*, ս.գերմ. *maken*, գերմ. *machen*, անգլ. *make* «անել, պատրաստել, շինել» (ՎԲԱ, *make*, Цыг., *мазь*): Իմաստային անցման համար հմմտ. լատ. *cultura* «շակում (հողի ևն), դաստիարակություն» <\**kʷel-* «շարժել, դարձնել, շրջել, պտտել» (ՎԲԱ, ՎԲՌ):

<sup>20</sup> Հմմտ. հ.բ.գերմ. *maro*, *marawi* և *mur(u)wi*, անգլ.-սաքս. *mearo* «փխրուն, փափուկ, նուրբ, բարակ, թեթև» (№ 1296), նաև՝ լեհ. *smagły*, հ.բ.գերմ. *smear*, *smehhar*, մ. բ. գերմ. *smecker* «նուրբ, բարակ, բարեձև» (№ 1785), մ.բ.գերմ. *minkstas* «փափուկ, ձկուն», լատվ. *mīkstas*, հ.եկ.սլավ. *mekъ-kъ* «փափուկ», \**meknoŋi* «փափկեցնել, մեղմել», *o-me-čiti* «փափկեցնել», ռուս. *мякш* «հացի միջուկ» (№ 1286), մ.իռլ. *mocht*, հ.իսլ. *mjúkr*, անգլ. *meek* «փափուկ», գոթ. *mūka-mōdei* «փափկություն» (№ 1313), հուն. *ἀμαλός* «նուրբ, թույլ, մեղմ», հ.բ.գերմ. *mulschen* «քնել, նիբհել» (№ 1257):

<sup>21</sup> Տե՛ս նաև Գ. Ջահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Եր., 1998, էջ 9, 15:

փոխինդի խառնուրդ», **մշտիկ** (մշ+տ+իկ) (տ սաստկական ածանցով) «աթարի փշրանք, կտորտանք», **մշխել** (\*մշ+ող-) «աղացած զանգվածը ձեթով միախառնել» [ $*(s)mō(r)-s-$  «տրորել, շփել» (ր-ի անկումով)]<sup>22</sup>: Այս խմբի բառերն առնչվում են փշրելու և խառնելու գործողություններին: Բոլորի համար ընդհանուր է **մշ-** (\*մուշ) սկզբնաբաղադրիչը, որն անշուշտ կապված է **մշել (մշրել)** «մանրել, փշրել» բառի հետ (տե՛ս վերը), մանավանդ որ Ս. Մալխասյանը նկատել է **մշիրած** և **մշրել** բառերի կապը (Մալխ., 3, 349): Գ. Ջահուկյանը ենթադրել է, թե **մշել (մշրել)**-ը կարող է կապված լինել **մաշել (\*մարշել)** բառի հետ (ՀՄԲ, 531): Թվարկված բառերից առաջին չորսը (*մշուր, մշոռ, մշիրած, մշտիկ*) (Մալխ., 3, 350, 349, ՀԼԲԲ, 4, 70) ստուգաբանական բառարաններում չկան: Դրանց **-ուր/-իր**<sup>23</sup>, **-ոռ** ածանցների համար հմմտ. *փշուր, մրուր, բլուր, բարուր, կտուր, մոծիր, թմիր, խտիր, լմփոռ, դանդալոռ*<sup>24</sup>: Հինգերորդը (*մշխել*) Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 336), իսկ Գ. Ջահուկյանը հնարավոր է համարել, որ փոխառություն լինի իրանական աղբյուրից (հ.-ե. \*meik- «խառնել» նախաձևից), բայց նշում է, որ «բուն աղբյուրը չի հավաստված» (ՀՄԲ, 531): Ավելի հավանական է ուղիղ կապը հ.-ե. նախաձևի հետ՝ սղված ու առնմանությամբ իլացած **-ող** ածանցով՝  $*(s)mō(r)-s->*մուշ->*մշ-ող-ել>*մշղել>մշխել$ : Աճանցի համար հմմտ. *խճողել, ճոռողել, յաջող, ձախող*<sup>25</sup>:

**Մուգ (մգել, մրգել, մրգոքել)** «սեղմելով քամել, հյութը հանել, կթել» [ $*(s)mō-(r)-g$  հ-  $<*smē-$  «տրորել, սեղմել, ճնշել»]<sup>26</sup> Գ. Ջահուկյանը այս արմատը կասկածով համարել է փոխառություն ակկադերեն *mazā'u* բառից (ՀՄԲ, 536): Սակայն դրա օգտին չի խոսում բարբառային **մրգել, մրգոքել** տարբերակների **ր** հնչյունը (**-ոք** աճանցի համար հմմտ. *բորբոքել, բարվոքել, փորոք*): Հ. Աճառյանը սեմական ձևերի հետ **մուգ** արմատի նմանությունը համարել է պատահական, բայց որևէ հավաստի ստուգաբանություն չի առաջարկել (ՀՄԲ, 3, 350-351): Ավելի համոզիչ է թվում հ.-ե. ծագման վարկածը:

**Մերժել** «1. խոտել, անարգել, արհամարհել, 2. ժխտել, բացասել,

<sup>22</sup> Հմմտ. հ.հնդկ. *mīśrāyati* «խառնված», ավեստ. *minašti* «խառը», *misvan-* «խառնուրդ պարունակող», հուն. *μίγνυμι* (*μειξω, ἔμειξα, μίγω*) «խառնել, խառնուրդ», մ.իռլ. *mesc(a)id* «խառնված», լատ. *miscēō, -ēre*, կիւր. *mysgu*, անգլ. *-սաքս. miscian*, լիտվ. *miešiu, miešti* (\*meikš)՝, լատվ. *misēt, h.բուլղ. mešo, mešiti* «խառնել» (№ 1251), նաև հուն. (σ)μικρός, σμικρός «փոքր, մանր, թույլ, կարճատև», լատ. *mīca* «փշուր, մանրահատ», *mīcidus* «պստիլիկ» (№ 1785), հ.հնդկ. *manthati, mathnāti* «հարել, թափահարել», ավեստ. *mant-* «խառնել», լիտվ. *mentūris* «փայտե խառնիչ», *menčiū, mėsti* «խառնել» (№ 1290), մ. ք. գերմ. *ge-manc, -ges* «խառնուրդ», լիտվ. *minkau, -yti* «խառնել, տրորել» (№ 1286):

<sup>23</sup> Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 15-16:

<sup>24</sup> Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 13, 15, 9:

<sup>25</sup> Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 19:

<sup>26</sup> Հմմտ. նաև հ.բուլղ. \*мъно, мети «ճնշել, մգել» (№ 1278), հուն. *ἀμέλγω* «կթել, մգել, ծծել», լատ. *mulgeō* (կատ. *mulsi*), ալբ. *miel, mil*, անգլ. *-սաքս. melcan, մ.իռլ. bligim* «կթել», *mlegun* «կիթ», *melg* «կաթ», թոխ. *A mälklune* «կիթ» (№ 1267), իտալ. *ammaccare* (լատ. \**maccare < \*mācāre*) «քամել, մգել» (№ 1214):

հերքել, հավանություն չտալ, չհաստատել, չընդունել, Յ. վանել, վրնդել, հեռացնել, արտաքսել» [ $\langle *(s)mer-g^{w}h-$  «պլոկել, մաքրել, ջնջել»]<sup>27</sup>: Այս բառը առկա է Յ. Պոկորնու բառարանում (Պոկ., № 1301): Սակայն Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 3, 307, ՀՄԲ, 524)՝ առանց անդրադառնալու Յ. Պոկորնու ստուգաբանությանը: Անբացատրելի է, թե նրանք ինչու են անտեսել Յ. Պոկորնու բառարանում տեղ գտած ստուգաբանությունը, որն ընդհանուր առմամբ ընդունելի է: Միայն նախաձևի վերջնահնչյունի՝ աճականի նշանակման խնդիր կա: Յ. Պոկորնին գործածել է  $\hat{g}$  գրանշանը՝  $*(s)mer\hat{g}-$ : Գ. Ջահուկյանը այդ դիրքում  $\hat{d}$ -ին համապատասխան նախահնչյունը նշանակել է  $g^{w}h$  տառակապակցությամբ (**շարժել**  $\langle *sk\hat{x}er-g^{w}h-$  (ՀՄԲ, 583), նաև **իժ**  $\langle *e\hat{g}^{w}hi-$  (ՀՄԲ, 284)): Նախընտրելի ենք համարում վերջինս (տե՛ս նաև վերը՝  $*mer-g^{w}h-$   $\langle$  **մերժել** «մերսել»):

Հայերենում կան ևս մի շարք բառեր, որոնք կարելի է բխեցնել հնիլ.  $*sm\bar{e}-$  ( $*smei-$ ,  $*sm-ei-$ ) «քսել, շփել, տրորել, քերել» արմատից ու նրա ածանցյալ տարբերակներից, որոնք, սակայն, մեկ այլ հոդվածի նյութ են:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱԲ – **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Եր., 1971-1979

ՀՄԲ – **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. 1-7, Եր., 2001-2012

Մալխ. – **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1944-1945

ՀԼՊ ՆԺ – **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987

ԼՔՀԼ – **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971

Աղ. – **Է. Աղայան**, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974

Պոկ. – **J. Pokorny**, Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 2005 (<http://www.proto-indo-european.ru/dic-pokorny/>)

ՎԲՄ – Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki>)

ՎԲՌ – Викисловарь (<https://ru.wiktionary.org/wiki>)

**Բանալի բառեր** – *հայոց լեզու, ստուգաբանություն, հնդեվրոպական նախալեզու, արմատ, ածանցյալ, աճական, ձայնդարձ, արմատային տարբերակներ*

<sup>27</sup> Հմմտ. հայ. *մոռանալ* (ՀՄԲ, 535), հ.ֆրիզ. *formsäia* «արհամարհել, մերժել» (№ 1785), նաև՝ հայ. *մոցել* «վանել, հեռացնել, հրաժարվել» (Աղ., 120-121), ն.բ.գերմ. *schmachten, ver-schmachten, գերմ. verschmähen* «արհամարհել, մերժել» (№ 1785):



**ОГАНЕС ЗАКАРЯН – Этимологические опыты и уточнения.** – В статье на основе морфо-семантических анализов и анализов лингвистических универсалий утверждается, что ряд армянских слов, до сих пор считающихся заимствованными или же не этимологизированными, произошли от праиндоевропейского корня \*smē- (\*smeī-, \*sm-ei-) "мазать, тереть, мять, скрести" и его производных вариантов, расширенных детерминативами и образованных разными степенями аблаута. Это: **մերսել** "массировать" [<\*mer-k'-], **մարզել** "тренировать" [<\*mṛ-g'h-], **մաշտել** "соскабливать" [<\*(s)mə(r)-s-], **մշտել** "тыкать" [<\*(s)mō(r)-s-], **մարմանդ** "умеренный" [<\*(s)məg-m-], **մրափ** "дремота" [<\*(s)mōr-], **մզել** "выжимать" [<\*(s)mō-(r)-g'h-], **մերժել** "отвергать" [<\*(s)mer-g<sup>w</sup>h-] и др.

**Ключевые слова:** армянский язык, этимология, праиндоевропейский язык, корень, дериват, детерминатив, чередование, корневые варианты

**HOVHANNES ZAKARYAN – Etymological Experiments and Corrections.** – The present article, proceeding from morpho-semantic analyses and analyses of linguistic universals, offers to derive a number of Armenian words, still not etymologized or considered to be borrowings, from PIE root \*smē- (\*smeī-, \*sm-ei-) "to smear, rub" and its derivative variants (extended by root determinatives and framed by different ablaut steps). They are: **մերսել** "massage" [<\*mer-k'-], **մարզել** "to train" [<\*mṛ-g'h-], **մաշտել** "scrape off" [<\*(s)mə(r)-s-], **մշտել** "poke" [<\*(s)mō(r)-s-], **մարմանդ** "mild" [<\*(s)məg-m-], **մրափ** "slumber" [<\*(s)mōr-], **մզել** "squeeze" [<\*(s)mō-(r)-g'h-], **մերժել** "reject" [<\*(s)mer-g<sup>w</sup>h-] etc.

**Key words:** the Armenian language, etymology, Protoindoeuropean, root, derivative, determinative, vowel gradation, root variants